Թուրքիա և Իսրայել.
ռազմավարական հակասություններից մինչև ռազմական սրացում[1]

Փորձագետի մեկնաբանություն, 26.09. 2025թ.

Բոգդան Բ. Աթանեսյան[2]

Սեղմագիր

ԱՌՎԱԿ-ի փորձագետ Բ. Աթանեսյանի մեկնաբանությունն ուսումնասիրում է Թուրքիայի և Իսրայելի հարաբերությունների սրացումը: Նա պնդում է, որ հարաճուն առճակատումը պայմանավորված է երկու պետությունների միջև հիմնարար աշխարհաքաղաքական շահերի առարկայական բախմամբ: Հոդվածում նշվում է երկու երկրների արտաքին քաղաքական դոկտրինների փոխակերպումը. Թուրքիայի կողմից՝ անցում դեպի տարածաշրջանային առաջնորդության նեոօսմանյան և պանթյուրքական հոլովույթ և Իսրայելի կողմից՝ հարձակողական ռազմավարության որդեգրում, որը ենթադրաբար ուղղված է «Մեծ Իսրայելի» հայեցակարգի իրականացմանը: Վերլուծվում են առանցքային երկփեղկված կետերը՝ Սիրիայում Բ. Ասադի վարչակարգի անկումը, քրդական և կիպրոսյան հարցերի գործիքավորումը և մրցակցությունն անդրմայրցամաքային էներգետիկ և լոգիստիկ ուղիների վերահսկողության համար: Եզրակացվում է, որ ընթացիկ փուլում Իսրայելը ցուցաբերում է ռազմավարական նախաձեռնություն՝ Թուրքիային ստիպելով ընտրություն կատարել անկանխատեսելի հետևանքներով ռազմական առճակատման և իր մերձավորարևելյան նկրտումներից հրաժարվելու միջև՝ ի շահ Կենտրոնական Ասիայի ուղղությամբ ծավալման:

Բանալի բառեր. *Թուրքիա, Իսրայել, աշխարհաքաղաքականություն, Մերձավոր Արևելք, նեոօսմանիզմ, պանթյուրքիզմ, «Մեծ Իսրայել», Սիրիա, Արևելյան Միջերկրական ծով:*

Մերձավոր Արևելքում ի հայտ է գալիս առճակատման նոր առանցք, որը ենթադրում է ուժերի հավասարակշռության հիմնարար փոփոխություն և տարածաշրջանում հակամարտությունների ներուժի ավելացում: Իսրայելի և Թուրքիայի միջև ուղղակի բախման հավանականությունը մեծանում է: Այս հեռանկարը, հեղինակավոր փորձագետների կարծիքով, այնպիսի ենթակայական գործոնների արդյունք չէ, ինչպիսիք են Բենիամին Նեթանյահուի և Ռեջեփ Թայիփ Էրդողանի անձնական հատկանիշները, այլ ավելի շուտ բխում է իրադարձությունների առարկայական ընթացքից, ինչը հանգեցնում է երկու առանցքային տարածաշրջանային տերությունների՝ Թուրքիայի և Իսրայելի շահերի բախմանը:

Ընդհանրապես ընդունված է, որ Անկարայի և Թել Ավիվի միջև սերտ ռազմական և քաղաքական համագործակցությունը նախկինում պայմանավորված էր ԱՄՆ-ի գլխավորած Հյուսիսատլանտյան դաշինքի ռազմավարությամբ՝ ԽՍՀՄ-ին և նրա արբանյակներին զսպելու Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: ՆԱՏՕ-ի գլոբալ ռազմավարությունը ենթադրում էր համակարգման բարձր մակարդակ իր աշխարհաքաղաքական ճամբարում, ուստի Արևմուտքից ամբողջովին կախված

[1] Մեկնաբանության բնօրինակը տեղադրվել է ԱՌՎԱԿ-ի կայքում 25.09.2025-ին:

[2] Հրապարակախոս, վերլուծաբան և վավերագրող: Հեղինակ է ավելի քան 1000 լրագրողական և քաղաքական-վերլուծական հոդվածների ու 400 հեռուստատեսային վավերագրական ֆիլմերի: Աշխատել է Հ1, ԱՐ, Երկիր Մեդիա հեռուստաընկերություններում: Համագործակցել և թղթակցել է «Голос Армении», «Aysor.am», «Ոսկանապատ», «Ազատ Արցախ» և այլ պարբերականների ու լրատվական կայքերին:

Թուրքիան (ՆԱՏՕ-ի անդամ 1952 թ.-ից) և Իսրայելը («ԱՄՆ-ի հիմնական դաշնակիցը ՆԱՏՕ-ից դուրս» 1987 թ.-ից) ստիպված եղան պահպանել համագործակցության բարձր մակարդակը՝ չնայած որոշակի տարածաշրջանային տարաձայնություններին: Ավելին, և՛ Անկարան, և՛ Թել Ավիվը հանդես են գալիս պանարաբիզմի դեմ, որը երկու կողմերն էլ համարում են ռազմավարական սպառնալիք:

ԽՍՀՄ փլուզումից և երկբևեռ դիմակայության ավարտից հետո Թուրքիան առարկայորեն կորցրեց իր նախկին նշանակությունը ՆԱՏՕ-ի համար և հնարավորություն ստացավ իր սուբյեկտայնության մակարդակն էապես բարձրացնել ինչպես ներքին, այնպես էլ տարածաշրջանային աշխարհաքաղաքական կյանքում: Դա հանգեցրեց պետական համակարգի ազատականացմանը, որը նախկինում ուղղված էր դեպի աշխարհիկությունը՝ քեմալիզմի շրջանակներում: Քաղաքական վերնախավերը և հասարակությունը սկսեցին ակտիվ հետաքրքրություն ցուցաբերել այլընտրանքային գաղափարական հոսանքների նկատմամբ՝ ծայրահեղ ազգայնականություն, պանթուրանիզմ, նեոօսմանյան ռևիզիոնիզմ և պանիսլամիզմ[3]: Այս տրամադրությունները սրվեցին ԵՄ անդամակցության ձախողված բանակցություններից հետո, որն ամրապնդեց թուրքական վերնախավի այն համոզմունքը, որ Արևմուտքը Թուրքիային դիտարկում է ոչ թե որպես իրավահավասար գործընկեր, այլ որպես ռազմաքաղաքական գործիք: Այս հիասթափության հիման վրա իշխանության եկավ Արդարություն և զարգացում կուսակցությունը (ԱԶԿ), որի գաղափարախոսությունը միավորում էր տարբեր հոսանքներ՝ Թուրքիային մղելով իր ինքնությունը որոնելու Արևելքում: Այս գործընթացին նպաստեցին երեք առանցքային գործոններ.

1. Նոր քաղաքական ուժի ապահոված ցատկային բնույթի տնտեսական աճը.
2. Պանարաբիզմի անկումն Արևմուտքի՝ Իրաք ներխուժումից և «Արաբական գարնան» հեղափոխությունների շարքից հետո, որոնք հանգեցրին Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի քաղաքական տեղապատկերի արմատական վերափոխմանը:
3. Հետխորհրդային Ռուսաստանի ազդեցության թուլացումը Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում.

Թուրքիան ձեռնամուխ եղավ արևելքում ակտիվ ծավալման քաղաքականությանը՝ նպատակադրվելով Արևմտյան Ասիայում հասնել էթնոքաղաքական գերակայության (պանթյուրքիզմ), իսլամական առաջնորդության (նեոօսմանիզմ) և տնտեսական գերիշխանության: Անկարայի հաջողությունները պայմանավորված էին ինչպես իր ներքին ներուժի մեկտեղումով, այնպես էլ արևմտյան քաղաքականության հետ սեփական նախաձեռնությունների հմուտ համադրմամբ, որի նպատակն էր վերացնել ռուսական մնացուկ ազդեցությունը և վերակազմավորել հումքային ու լոգիստիկ շուկաները:

Ի տարբերություն Թուրքիայի, Իսրայելը ԽՍՀՄ փլուզումից հետո հայտնվեց ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ուշադրության կենտրոնում: Դա պայմանավորված էր տարածաշրջանային

[3] Simavoryan, A. (2010). Ideological Trends in the Context of Foreign Policy of Turkey. Europe&Orient, (11), 55-62.

հավասարակշռությունը վերափոխելու անհրաժեշտությամբ՝ հակազդելու Չինաստանի աճող ազդեցությանը, որն ակտիվորեն լրացնում էր ԽՍՀՄ-ից հետո բաց մնացած խորշերը՝ հաստատելով երկբևեռ աշխարհը վերականգնելու սեփական հավակնությունները, իր տնտեսությունն ապահովելով էներգետիկ պաշարներով և առևտրային ուղիներ կառուցելով դեպի Եվրոպա ու Աֆրիկա: Միևնույն ժամանակ, Իսրայելի ավանդական թշնամանքն Իրանի կրոնապետական վարչակարգի նկատմամբ և Արաբական աշխարհը պառակտելու փորձը հարմարավետորեն տեղավորվում էին ԱՄՆ-ի նոր ռազմավարության մեջ: Վաշինգտոնը շահագրգռված էր Իրանի դերի՝ որպես Պեկինի համար հումքային և լոգիստիկ ակտիվի վերացմամբ, Պարսից ծոցի նավթով հարուստ միապետությունների վերահսկմամբ և ռազմական ու ռազմաքաղաքական «*խուսավարումներով*» Սուեզի ջրանցքի շուրջ, որը մնում է Չինաստանի հիմնական մայրցամաքային առևտրային և լոգիստիկ զարկերակը:

Հաշվի առնելով դա, ԱՄՆ ռազմատեխնիկական և ֆինանսական աջակցության ավելացումը Թել Ավիվին սպասելի էր, ինչպես նաև այստեղ ծայրահեղ արմատական ուժերի իշխանության գալը, որոնք իրենց ռազմական դոկտրինան փոխեցին՝ պաշտպանականից անցնելով ագրեսիվ հարձակողականի: Թել Ավիվն անցավ առավելապաշտական քաղաքականության՝ «*գոյատևման*» հայեցակարգը փոխարինելով «*ընդլայնման*» և տարածաշրջանային թելադրանքի գաղափարախոսությամբ, որը ձևակերպվել է Բ. Նեթանյահուի առաջադրած, այսպես կոչված, «*Մեծ Իսրայել*»[4] ծրագրով: Ըստ վերլուծաբանների, դա ենթադրում է Իսրայելի տարածքի ընդլայնում՝ ներխուժելով Եգիպտոս, Սիրիա, Հորդանան, Լիբանան, Սաուդյան Արաբիա և Իրաք, գրավելով նավթ արդյունահանող առանցքային շրջանները և նոր միջմայրցամաքային առևտրի և էներգետիկ ուղիների ստեղծում Արևելք–Արևմուտք և Հյուսիս–Հարավ առանցքների երկայնքով՝ շրջանցելով Իրանը: Այս ծրագրի իրականացման գործիքներ պետք է լինեն Իսրայելի ռազմական հզորությունը, ԱՄՆ աջակցությունը, «Աբրահամի համաձայնագրի» նախաձեռնությունը և համաքրդական միասնության խաղաքարտի գործադրումը՝ «*Մեծ Քրդստան*» ստեղծելու հեռանկարով և այլն:

Եթե իսրայելական վերնախավերն իսկապես նման հավակնոտ ծրագիր ունեն, և այն համապատասխանում է ԱՄՆ-ի գլոբալ շահերին, ապա վերջինիս իրականացումը երկարաժամկետ ռազմավարություն կպահանջի: Նույնիսկ եթե հաշվի առնենք, որ «*Մեծ Իսրայել*» ծրագիրը ժողովրդահաճո պատում է՝ որպես Գազայի իրադարձությունների և Իրանի հետ վերջին պատերազմի համապատկերում Իսրայելում ընթացող և հուզականորեն գունավորված գործընթացների արձագանք, ապա Թել Ավիվի գործողություններն՝ ուղղված առկա ստատուս քվոյի ապակայունացմանը, այդ դեպքում ևս չեն կարող անհանգստություն չառաջացնել տարածաշրջանային խաղացողների

[4] «План «Великий Израиль»: отдайте нам половину Саудовской Аравии». Tasnim, 17.09.2025, https://bit.ly/3KiD6Uu (բեռնման օրը՝ 19.09.2025).

շրջանում: Նրանք գիտակցում են, որ Իսրայելի քաղաքականությունը հակասում է իրենց փորձերին՝ պահպանել անվտանգության մնացորդային հավասարակշռությունը և թույլ չտալ Մերձավոր Արևելքի գահավիժումը դեպի համատարած խառնաշփոթ:

Իսրայելի գործողությունները, նույնիսկ եթե ուղղված չեն տարածքների ուղղակի զավթմանը, նպաստում են տարածաշրջանի ռազմաքաղաքական կազմալուծմանը: Սա իր հերթին հակասում է Թուրքիայի հիմնարար շահերին, որն ունի իր ռազմավարական ծրագրերը և արդեն նշանակալի դիրք է գրավել տարածաշրջանում: Ըստ էության, խոսքը վերաբերում է ոչ միայն այս ծրագրերի ձախողմանը, այլ նաև Թուրքիայի անվտանգության և տարածքային ամբողջականության համար գոյութենական սպառնալիքին:

Անկարայի և Թել Ավիվի միջև հակամարտությունը վաղուց էր հասունանում: 2010 թ. «*Ազատության նավատորմի*» հետ տեղի ունեցած միջադեպը[5] ոչ թե պատճառն էր, այլ սոսկ բացահայտ առճակատման ուղեցույցը, որի հիմքում ընկած էին կուտակված հակասությունները: Թուրքիան միտումնավոր էր դիմել այդ «*մարդասիրական սադրանքին*», որպեսզի ցուցադրի իսլամական աշխարհն առաջնորդելու իր պատրաստակամությունը և «*արևմտյան իմպերիալիզմին*» զսպելու իր մտադրությունը:

Սակայն «*Արաբական գարունը*» երկար ժամանակով հետաձգեց թուրք-իսրայելական հակամարտության կիզակետացումը: Արաբական աշխարհում տեղի ունեցող խառնաշփոթ գործընթացները, քաղաքական վարչախմբերի արագ փոփոխությունները և, այսպես կոչված, «*Իրաքի և Լևանտի իսլամական պետություն*» (ԻԼԻՊ) առաջացումը երկու կողմին էլ զրկել էին կանխատեսումներ անելու և հուսալի դաշինքներ կառուցելու կարողությունից: Ստեղծվող աշխարհաքաղաքական միջավայրում Թուրքիային և Իսրայելին ավելի շատ մտահոգում էր «*արաբական հեղափոխության*» հետագա տարածման սպառնալիքը, որը կարող էր վտանգել նրանց արտաքին և ներքին անվտանգությունը: Թուրքիան բախվեց իր հարավային սահմանի ողջ երկայնքում ապակայունացման, Սիրիայում, Իրաքում և իր տարածքում քրդական գործոնի ուժեղացման հետ և հայտնվեց, այսպես կոչված, թուրքական իրականության մեջ «*արաբական հեղափոխություն*» ներկրելու վտանգի առաջ: Իսրայելի առաջ, իր հերթին, ծառացել էր հեղափոխական ալիքի վրա Եգիպտոսում իշխանության եկած «*Մուսլման եղբայրներին*» (2012 թ.) զսպելու և դաշնակից Հորդանանում տեղի ունեցող ներքաղաքական գործընթացների վերահսկման հիմնախնդիրը, որտեղ Հաշիմյան միապետությունը բողոքների ճնշման ներքո ստիպված էր օրինականացնել քաղաքական իսլամը[6]: Եգիպտոսում, Սիրիայում և Հորդանանում տեղի ունեցող ներքաղաքական գործընթացները նույնպես որոշակի ազդեցություն ունեցան Գազայում ՀԱՄԱՍ-ի ագրեսիվության աճի վրա, որն «*Արաբական գարնան*» մեջ տեսավ հետհեղափոխական Արաբական աշխարհի կողմից պաղեստինցիների աջակցության ընդլայնման հեռանկարը:

---

[5] «'Флотилия свободы'. Досье». ТАСС, 29.07.2015, https://tass.ru/info/2079767 (բեռնման օրը՝ 19.09.2025).

[6] Mazen Hawamdeh, Ahmad Al-Qteishat, «Political reforms in Jordan following the events of the Arab Spring». Вестник Российского университета Дружбы народов, 2019, https://journals.rudn.ru/public-administration/article/view/22324/17484 (բեռնման օրը՝ 20.09.2025).

Հետագա փուլում և Անկարան, և Թել Ավիվը հաջողությամբ օգտագործեցին «*Արաբական գարնան*» հետևանքները՝ ամրապնդելու համար իրենց արտաքին քաղաքական դիրքերը[7]: Իսրայելը վերացրեց հակասիոնիստական դաշինքներ ստեղծելու հնարավորությունը, մինչդեռ Թուրքիան հաստատվել է որպես մի շարք արաբական պետությունների (Լիբիա, Եգիպտոս, Կատար, հետասադյան Սիրիա) ռազմավարական գործընկեր՝ ցուցադրելով իր առաջնորդական հավակնությունները[8,9]: Բացի այդ, երկու երկրներն էլ ընդլայնել են իրենց ռազմական ներկայությունը սեփական սահմաններից դուրս, հիմնականում՝ սիրիական տարածքներում՝ հիմնավորելով դա «*ահաբեկչական սպառնալիքների*» դեմ անվտանգության բուֆերային գոտիների ստեղծման անհրաժեշտությամբ:

Արդյունքում Անկարան և Թել Ավիվը կառուցեցին ուժեղ տարածաշրջանային դիրքեր, ինչը նրանց թույլ տվեց որպես առաջատար դերակատարներ մասնակցելու Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական օրակարգի ձևավորմանը: Այնուամենայնիվ, առաջնայնության համար կատաղի մրցակցությունը չբացառեց շահերի մերձեցումը մի շարք հարցերի շուրջ: Դրա օրինակն է Սիրիան, որտեղ երկու կողմերն էլ ռազմական և քաղաքական նախաձեռնություն ցուցաբերեցին Բ. Ասադի ռեժիմի դեմ պայքարում: Հատկանշական է նաև Ադրբեջանի հետ կապված իրավիճակը, որտեղ Անկարան և Թել Ավիվը Բաքվին աջակցեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լուծարման հարցում: Վերջապես, առևտրատնտեսական գործընկերությունը մնաց փոխգործակցության կարևոր տարր, որը, չնայած Անկարայի հակահիսրայելական բոյկոտին և պաշտոնական արգելանքին, շարունակվեց ստվերային սխեմաների միջոցով[10]:

Միևնույն ժամանակ, երկու կողմերը սրեցին իրենց փոխադարձ ագրեսիվ հռետորաբանությունը և տարբեր տեսակետներ ցուցադրեցին տարածաշրջանի ապագայի վերաբերյալ: Արևմտյան ուժային կենտրոնների նախաձեռնած հաշտեցման փորձերն արդյունք չտվեցին՝ բացահայտելով քաղաքական հարաբերությունների անշեղ անկում:

Մի շարք փորձագետների կարծիքով, եթե ԱՄՆ-ն աջակցում է իսրայելական զավթողականությանը՝ նպատակ ունենալով խաթարել Չինաստանի ազդեցությունը և լոբբինգ է անում *IMEC* առևտրա-էներգետիկ նախագծի համար[11], ապա տարածաշրջանում Թուրքիայի առաջնորդությամբ շահագրգռված է Մեծ Բրիտանիան: Լոնդոնը ջանքեր է

---

[7] Труевцев К., «Десять лет «арабской весны»: пейзаж после битвы». КиберЛенинка, https://cyberleninka.ru/article/n/desyat-let-arabskoy-vesny-peyzazh-posle-bitvy (բեռնման օրը՝ 20.09.2025).

[8] Петросян А. С., «Роль Турции в «Арабской весне». Фонд Нораванк, 2018, https://www.noravank.am/rus/articles/security/detail.php?ELEMENT_ID=17605 (բեռնման օրը՝ 20.09.2025).

[9] Свистунова И., «Турция в контексте «арабской весны»: региональная стратегия». Российский институт стратегических исследований. РИСИ, 24.09.2011, https://riss.ru/analitica/turtsiya-v-kontekste-arabskoy-vesny-regionalnaya-strategiya/ (բեռնման օրը՝ 20.09.2025).

[10] Кантор В., «Турция и Израиль: Торговля из-под полы». Haqqin.az, 31.08.2025, https://haqqin.az/ news/358668 (բեռնման օրը՝ 20.09.2025).

[11] Сажин В., «Коридор Индия–Ближний Восток–Европа: еще один…». Международная жизнь, 28.09.2023, https://interaffairs.ru/news/show/42439 (բեռնման օրը՝ 20.09.2025).

գործադրում աջակցելու Անկարայի ծրագրերին, որոնք նախատեսում են Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական վերակազմավորումն այնպես, որ հենց Թուրքիայում (բայց ոչ Իսրայելում) միակցվեն Եվրասիայի միջմայրցամաքային ապրանքահոսքի և էներգակիրների մատակարարման հիմնական ուղիները («Զարգացման ճանապարհը»[12], Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթգիծը, «Անդրկասպյան երթուղին», ա. կ. «*Զանգեզուրի միջանցքը»):* Այս պնդումների համաձայն՝ թուրքական գործոնի ուժեղացումը բխում է Մեծ Բրիտանիայի շահերից, որն իր մրցակցային խաղն է տանում տարածաշրջանում պաշարների և երթուղիների նկատմամբ գերիշխանության համար՝ բաց չթողնելով ԱՄՆ-ին խոստումնալից տարածքներից և նախագծերից դուրս մղելու հնարավորությունը[13]: Այս մեծ մրցակցության մեջ Թուրքիան ընդամենը բրիտանական ռազմավարության օպերատորն է, ինչպես Իսրայելը՝ ամերիկյան ռազմավարության: Սակայն արևմտյան երկու կարևորագույն դերակատարների շահերի «*սպասարկումը*» զգալի նախապատվություններ է խոստանում Անկարային և Թել Ավիվին: Եվ դա բացատրում է, թե ինչու Թուրքիան, հստակ գիտակցելով, որ Իսրայելը վայելում է ԱՄՆ-ի լիակատար աջակցությունն իր ծավալապաշտական գործողություններում, չի հրաժարվում սեփական տարածաշրջանային հավակնություններից և ինքն է սրում առճակատումը:

Թեև 2010-ական թթ. սկզբից ի վեր Անկարայի և Թել Ավիվի միջև լարվածությունն արտահայտվում էր հիմնականում կոշտ հռետորաբանությամբ, իրավիճակը կտրուկ սրվեց 2024 թ. վերջից: Գործարկիչը (trigger) Սիրիայում Բաշար ալ-Ասադի վարչակարգի տապալումն էր Թուրքիայի կողմից աջակցվող Hayat Tahrir al-Sham – SHAMTS-ի (Սիրիա) ազգային զինված ուժերի հարձակումների ներքո: Ընդհանուր թշնամու հեռանալով՝ Թուրքիայի և Իսրայելի միջև բուֆերային գոտին նույնպես անհետացավ: Դամասկոսում իշխանությունը զավթած Ահմեդ ալ-Շարաայի (ալ-Ջուլանի) թուրքամետ ռեժիմը փաստացի Թուրքիային թույլ տվեց մուտք գործել դեպի Իսրայելի արևելյան սահման[14]: Իր խոցելիության գիտակցումը Թել Ավիվին ստիպեց ալ-Շարաայի վարչախումբը հայտարարել «*ահաբեկչական*», իսկ Թուրքիային՝ «*Իսրայելի անվտանգության թիվ 1 սպառնալիք*», Իրանից ավելի վտանգավոր»[15]:

Իսրայելը նախաձեռնեց մի քաղաքականություն, որն ուղղված է, պաշտոնական մեկնաբանությամբ, Սիրիայի դաշնայնացմանը, սակայն իրականում նրա մասնատմանն ու փլուզմանը: Աջակցությունն Աս-Սուվեյդայում դրուզների ապստամբությանը[16] և

[12] «Дорога развития»: Эрдоган реализует альтернативный США проект на Ближнем Востоке». Вестник Кавказа, 23.04.2024, https://vestikavkaza.ru/analytics/doroga-razvitia-erdogan-realizuet-alternativnyj-ssa-proekt-na-bliznem-vostoke.html (բեռնման օրը՝ 20.09.2025).

[13] «Бениамин Матевосян: Великобритания забирает себе «Зангезурский коридор». Alhpanews.am, 18.09.2025, https://alphanews.am/ru/projects/beniamin-matevosyan-velikobritaniya-z/ (բեռնման օրը՝20.09.2025).

[14] «Израиль берет под прицел Турцию». Kommersant, 09.01.2025, https://www.kommersant.ru/ doc/742300 (բեռնման օրը՝ 20.09.2025).

[15] «Скрытая угроза: Израилю предрекли новую войну». Военное дело, 08.01.2025, https://voennoedelo.com/posts/id68529-skrytaja-ugroza-izrailju-predrekli-novuju-vojn (բեռնման օրը՝ 20.09.2025).

[16] Նույն տեղում:

Ռոժավայում քրդական ինքնավարությունը խթանելու ծրագրերի մշակումը՝ տարածաշրջանում համաքրդական ինքնիշխան պետության ստեղծման հեռանկարով[17], բացահայտ մարտահրավերներ են դարձել Թուրքիայի համար: «*Քրդական խաղաքարտի*» գործադրումն արդեն արդյունքներ է տալիս՝ ՔԲԿ-ին զինաթափելու Անկարայի նախաձեռնությունը ձախողվում է, իսկ Ռոժավան փաստորեն հրաժարվում է Սիրիան միասնականացնելու՝ Դամասկոսի հանդեպ ստանձնած իր պարտավորություններից[18], իսկ Իրաքի քրդաբնակ շրջաններով «*Զարգացման ճանապարհ*» երթուղու անցկացման հեռանկարները, որոնց միջոցով Թուրքիան ձգտում է ուղղակիորեն մուտք ունենալ Պարսից ծոցի հումքային պաշարների տարածաշրջան ու ելք ապահովել դեպի Հնդկական օվկիանոս, հետզհետե մշուշոտ են դառնում:

Թել Ավիվը ոչ պակաս վճռական քայլեր է ձեռնարկել Անկարայի «*պաղեստինյան շահերի*» դեմ՝ նպատակ ունենալով վերացնել Թուրքիայի հնարավոր աջակցությունն ու ազդեցությունը ՀԱՄԱՍ-ի վրա: Ըստ միջազգային աղբյուրների՝ Կատարին հասցված հարվածի թիրախը եղել են ՀԱՄԱՍ-ի՝ Թուրքիայում ապաստան գտած թևի առաջնորդները: Առավել ևս, Թել Ավիվն ի սկզբանե ծրագրել էր թուրքական տարածքում վերացնել ՀԱՄԱՍ-ի ղեկավարությանը[19]: Կատարի վրա հարձակումը զգալի հարված էր Անկարայի հեղինակությանը, քանզի այնտեղ է տեղաբաշխված տարածաշրջանում ամենամեծ՝ «*Թարիք բին Զիյադ*» թուրքական ռազմակայանը[20]: Կատարի հակաօդային պաշտպանության պայմանագրի համաձայն՝ թուրքական ուժերը պետք է հետ մղեին հարձակումը, սակայն չկարողացան կամ չցանկացան դա անել: Անկարան, ըստ էության, միայն զգուշացրել է Դոհա ժամանած պաղեստինցիներին Իսրայելի օդային հարվածների ժամանակի և կոորդինատների մասին[21]:

Այս գործողությունները, զուգորդված լինելով ՑԱԽԱԼ-ի՝ Թուրքիայի կողմից Սիրիային մատակարարվող հակաօդային պաշտպանության ենթակառուցվածքներին ուղղված հարվածներով, ցույց են տալիս, որ Թել Ավիվը հետևողականորեն սրում է իր առճակատումն Անկարայի հետ:

Իսրայելի հակաթուրքական գործողությունների համակարգված լինելու մասին է վկայում նաև նրա ակտիվության կտրուկ աճն Արևելյան Միջերկրական ծովում: Ըստ աղբյուրների՝ Իսրայելն ինտենսիվորեն ՀՕՊ «*Barracks MX*» առաջնային համակարգեր է տեղակայում

---

[17] «США и Израиль приступили к осуществлению проекта «Большой Курдистан». Аналитический центр АРВАК, 28.09.2025, https://bit.ly/48uRzGQ (բեռնման օրը՝ 20.09.2025).

[18] «Поддерживаемые США курдские ополченцы согласились объединиться с силами нового правительства Сирии». BBC, 11.03.2025, https://www.bbc.com/russian/articles/ckgzm1rx191o (բեռնման օրը՝ 20.09.2025).

[19] «KAN: Израиль рассматривал возможность удара по руководству ХАМАС в Турции, но выбрал Катар». Новости Mail, 11.09.2025, https://news.mail.ru/politics/67845443 (բեռնման օրը՝ 20.09.2025).

[20] «Катар все больше превращается в плацдарм Турции на побережье Персидского залива». Военно-политическая аналитика, 14.09.2024, https://vpoanalytics.com/sobytiya-i-kommentarii/katar-prevrashchaetsya-v-platsdarm-turtsii-na-poberezhe-persidskogo-zaliva/ (բեռնման օրը՝ 20.09.2025).

[21] «Турция спасла верхушку ХАМАСа: стало известно о сигнале Анкары группировке». GURSORINFO, 10.09.2025, https://cursorinfo.co.il/israel-news/turtsiya-spasla-verhushku-hamasa-stalo-izvestno-o-signale-ankary-gruppirovke/ (բեռնման օրը՝ 20.09.2025).

Կիպրոսի հունական հատվածում[22], ինչը փոխում է ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում: Ավելին, փորձագետները խոստովանում են կղզու բռնազավթված հատվածում Անկարայի կողմից կառուցված հակաօդային պաշտպանության համակարգի իսրայելական գործողության ընթացքում ոչնչացման մեծ հավանականությունը[23]: Թեև իսրայելական ՀՕՊ և հակահրթիռային պաշտպանության համակարգերով Կիպրոսը վերազինելու գործընթացը նոր չէ («*Երկաթե գմբեթ*» գնելու մասին պայմանագիրը կնքվել է դեռ 2022 թ.[24]), այս թեմայի շուրջ նոր ոգևորությունը կարող է պայմանավորված լինել մատակարարումների ակտիվացմամբ և Իսրայելի կողմից թուրք-հունական ճգնաժամի նոր փուլի միտումնավոր սադրանքով, որին կհաջորդի հակաթուրքական ճակատի ընդլայնումը և հունական գործոնի ներգրավումն Անկարայի հետ առճակատման մեջ, որն էլ, իր հերթին, հղի է Թուրքիայի և ԵՄ հարաբերությունների սրմամբ:

Հանրագումարի բերելով վերը նշվածները՝ կարելի է եզրակացնել, որ այս փուլում հենց Իսրայելն է նախաձեռնողը, և նա է փորձում Թուրքիային ստիպել, որպեսզի ընդունի իր կանոնները: Նրա զինանոցում ռազմական և տեխնոլոգիական գերազանցությունն է՝ ներառյալ մարտավարական միջուկային մարտագլխիկները, «*քրդական խաղաքարտը*», հունական գործոնը և ԱՄՆ-ի անվերապահ աջակցությունը:

Թուրքիան փորձում է ավելի զգույշ գործել՝ խուսափելով միջադեպերից, որոնք կարող են ուղղակի բախումների հանգեցնել: Թուրքիայի ԶՈՒ-ի և ՌԾՈՒ-ի քանակական գերազանցությունը, ինչպես նաև, ի տարբերություն Իսրայելի, ռազմավարական խորքի առկայությունը բավարար չեն հակագործողության դիմելու համար: Անկարայում նաև հաշվի են առնում այն փորձագիտական կարծիքները, որոնք կանխատեսում են, որ ՆԱՏՕ-ն կհրաժարվի 5-րդ Հոդվածի իր պարտավորություններից Թուրքիայի և ԱՄՆ-ի ամենամոտ դաշնակցի միջև բախման դեպքում[25]:

Ելնելով դրանից՝ Անկարան տակավին փորձում է խուսավարել ու գործել քաղաքական և դիվանագիտական դաշտում՝ ակտիվորեն մասնակցելով ինչպես ՄԱԿ-ում հրեական պետության քաղաքական մեկուսացման նախաձեռնություններին՝ կապված Գազայի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների հետ, այնպես էլ՝ փորձելով իր գլխավորությամբ հակաիսրայելական «*Իսլամական կոալիցիա*» ձևավորել[26], որը, սակայն, կապված է մեծ դժվարությունների հետ և չի կարող իրատեսական ուղի համարվել:

---

[22] «Что известно о системе, которую Израиль поставил на Кипр». GURSORINFO, 20.09.2025, https://cursorinfo.co.il/israel-news/chto-izvestno-o-sisteme-kotoruyu-izrail-postavil-na-kipre/ (բեռնման օրը՝ 21.09.2025):

[23] «Израиль готовит спецоперацию в Турецком Кипре». Haqqin.az, 02.08.2025, https://haqqin.az/news/355825 (բեռնման օրը՝ 21.09.2025).

[24] «Forbes: Кипр покупает 'Железный купол' и может отдать Украине свои старые системы ПВО». Detali.co.il, 26.08.2022, https://detaly.co.il/forbes-kipr-pokupaet-zheleznyj-kupol-i-mozhet-otdat-ukraine-svoi-starye-sistemy-pvo/ (բեռնման օրը՝ 21.09.2025).

[25] «Аналитик предупредил о риске военной атаки на Турцию». РИА Новости, 11.09.2025, https://ria.ru/20250911/ataka-2041128498.htm (բեռնման օրը՝ 21.09.2025).

[26] «Эрдоган строит «исламскую коалицию» против Израиля – не повторит ли он судьбу Саддама?». Афинские Новости, 16.09.2025, https://rua.gr/news/sobmn/73375-erdogan-stroit-islamskuyu-koalitsiyu-protiv-izrailya-ne-povtorit-li-on-sudbu-saddama (բեռնման օրը՝ 21.09.2025).

Անկարայի առջև ծառացած դժվարությունների մասին է վկայում «Ազգայնական շարժում կուսակցության» առաջնորդ Դ. Բախչելիի հայտարարությունը, ով Ռ. Թ. Էրդողանին առաջարկել է դաշինք ստեղծել ՌԴ-ի և Չինաստանի հետ՝ ի հակակշիռ «*չարի կոալիցիայի*» (Իսրայել և ԱՄՆ): Մի շարք թուրք փորձագետներ այն կարծիքին են, որ «հիմնական թուրք ազգայնականի» առաջարկն ուղղված է *«ներքին քաղաքականության կողմնորոշվածության օրակարգի ձևավորմանը»*[27]: Մինչդեռ միջազգային վերլուծաբանների մեծ մասն այս առաջարկը մեկնաբանում է որպես ուղղակի նենգասպառնալիք ՆԱՏՕ-ին և ԱՄՆ-ին, որոնք, ըստ Թուրքիայի, չեն պահպանում հավասարությունն Անկարայի և Թել Ավիվի հետ հարաբերություններում[28]: Դ. Բախչելին ավանդաբար համարվում է Ռ. Թ. Էրդողանի այն մտքերի բարձրաձայնողը, որոնք նախագահն ինքը չի կարող արտահայտել: Դրանով իսկ Թուրքիայի առաջնորդը փորձում է Վաշինգտոնին փոխանցել Արևմուտքի հանդեպ դեպի թշնամական «*Մոսկվա–Պեկին առանցք*» իր ռազմավարական վերակողմնորոշման սպառնալիքը՝ Իսրայելի կողմից շարունակվող սրացման դեպքում:

Միևնույն ժամանակ, գործնականում բոլոր փորձագետներն էլ համամիտ են, որ դա «*կեղծ*» ազդանշան է, և Ռ. Էրդողանը նման աշխարհաքաղաքական շրջադարձ չի ձեռնարկի: Ավելի շուտ, Թուրքիայի առաջատար ազգայնականի միջոցով ուղարկված ազդանշանը ցույց է տալիս ոչ թե Թուրքիայի ուժն ու վճռականությունը՝ վերանայելու իր ռազմավարական դաշնակցությունն ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ, այլ նրա թուլությունն ու անպատրաստությունը մարտահրավերներին, որոնք նրան նետվել են Մերձավոր Արևելքի տարածաշրջանի աշխարհաքաղաքական վերակազմավորման համատեքստում: Դրանք ոչ միայն ռազմաքաղաքական բնույթի մարտահրավերներ են, այլ նաև գործողություններ են, որոնք ուղղված են այդ երկրի միջազգային հեղինակության և նրա պատմա-քաղաքակրթական դերի վիժեցմանը, ինչը թուրքական իշխանությունները փորձում են պահպանել՝ ակտիվորեն սրբագրելով նրա անցյալը:

Մինչդեռ 2025 թ. օգոստոսի 26-ին Իսրայելի վարչապետ Բ. Նեթանյահուն իր հարցազրույցում 1915 թվականին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցածն անվանեց «*ցեղասպանություն*», հավելելով, որ ընդունում է այդ փաստը[29]: Տվյալ հայտարարությունը տարբեր մեկնաբանություններ է ստացել. սկսած Նեթանյահուի *«սխալմունքից»* և վերջացրած հակաթուրքական հուզական հռետորաբանության հերթական դրսևորմամբ, որն իրավական արժեք չունի, քանզի «*1915 թվականի իրադարձություններն*» առանց Կնեսետի համապատասխան բանաձևի Իսրայելում չեն կարող ցեղասպանություն համարվել: Այնուամենայնիվ, պետք է ենթադրել, որ սա պարզապես հռետորական քայլ

[27] «В Турции оценили идею создать альянс с Россией и Китаем». РИА Новости, 19.09.2025, https://ria.ru/20250919/turtsija-2042882199.html (բեռնման օրը՝ 21.09.2025).

[28] «Турция, Россия и Китай создадут новую ось». Haqqin.az, 20.09.2025, https://haqqin.az/news/360638 (բեռնման օրը՝ 21.09.2025).

[29] Жуков Е., «Нетаньяху признал резню армян в Османской империи геноцидом». DW, 27.09.2025, https://www.dw.com/ru/netanahu-priznal-reznu-arman-v-osmanskoj-imperii-genocidom/a-73783729 (բեռնման օրը՝ 21.09.2025).

չէր Իսրայելի հասցեին նացիզմի և պաղեստինցիների ցեղասպանության Անկարայից հնչող մեղադրանքների համապատկերում, այլ հստակ նախազգուշացում Իսրայելի կողմից 1915 թվականի իրադարձությունները որպես ցեղասպանություն պետական ճանաչման բարձր հավանականության մասին, եթե Թուրքիան չհրաժարվի իր հավակնություններից: Եվ տարածաշրջանային գործընթացների լույսի ներքո հայերի, հույների և ասորիների ցեղասպանության մասին բանաձևը Բ. Նեթանյահուի կամքով ավելի շուտ անարգել կընդունվի Կնեսետի կողմից, քան թուրքական զորքերն Էրդողանի հրամանով Երուսաղեմ կմտնեն[30]:

Թուրքիան այսօր կանգնած է բարդ երկընտրանքի առաջ. կա՛մ Իսրայելին դիմակայել՝ իսլամական աշխարհի առաջնորդ դառնալու հեռանկարով, թեև այս պատերազմի անկանխատեսելի ելքով, կա՛մ գրեթե ամբողջությամբ հրաժարվել «*ըստ սեփական կորաքանոնների*» արաբական Մերձավոր Արևելքի վերակառուցման դժվարին, բայց հաջող աշխատանքից, որը կատարվել է վերջին երկու տասնամյակների ընթացքում: Անկարայի առջև արգելափակում են նեոօսմանյան ռևիզիոնիզմի գաղափարախոսությամբ ոգեշնչված ճանապարհը, դրդելով նրան դեպի պանթյուրքիզմի և պանթուրանիզմի հուն ուղղել իր ավելցուկ ուժերը: Դա եղել է Արևմուտքի «թուրքական քաղաքականության» հոլովույթը վերջին հարյուրամյակի ընթացքում, և հենց թուրքական զավթողամոլության վերակողմնորոշման այս վեկտորի վրա է, որ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան, հնարավոր է, արդեն փոխզիջում են փնտրում: Կովկասը և Կենտրոնական Ասիան Վաշինգտոնի և Թել Ավիվի համար հանդիսանում են թուրքական ուժի իրացման միակ ընդունելի ուղղությունը: Եթե Լոնդոնը համաձայնի դրան, ապա Անկարան կարող է հույս դնել ԱՄՆ-Իսրայել երկյակի կողմից իր հավակնությունների աջակցության վրա:

Այդպիսով, Թուրքիան կարող է մնալ Վաշինգտոնի և Թել Ավիվի դաշնակիցների շարքում սոսկ այն պայմանով, եթե իր զավթողամոլ նկրտումներն ամբողջությամբ վերահասցեավորի դեպի *«Թուրանի»* ընդարձակ տարածքներ, որտեղ, սակայն, նա անխուսափելիորեն ստիպված կլինի բախվել «*Մոսկվա–Թեհրան–Պեկին առանցքի*» հետ:

[30] «Эрдоган угрожает Израилю: мы не откажемся от Иерусалима». CURSORINFO, 19.09.2025, https://cursorinfo.co.il/israel-news/erdogan-ugrozhaet-izrailyu-my-ne-otkazhemsya-ot-ierusalima/ (բեռնման օրը՝ 21.09.2025).